

891.99-82

Բ-27

ՔԱՆԴԱՐԻ ԱԼՓՈՍԸ

Ժ Ա Ղ Ա Վ Ա Տ Ի Ւ



Խ Ե Ճ Ա Խ Ա

Տպարան «ՀԵՐԱԿ» Գլուխկոյան փող. № 6. Հեռախոս № 566.

1914

71.660

20 06 / 09

605 - ED 12

№ 7

Ն Օ Ր Գ Ր Ա Ր Ա Ր Ա

04 OCT 2011

99-824

-27

1-2

-6 NOV 2011

ՊԱՇԻՈՐԻ ԱԼ'ԲՈՒՐԸ

Ժ Ա Չ Ո Վ Ա Ծ Ո Ւ



Թ Ա Ժ Լ Ի Խ Ս

Տպարան «ՀԵԲՍԵՍ» Գրաֆուկայա փող. № 6. Հեռախոս № 566.
1914

ԴԱՐԲԻՆԸ

Զեռքերիս զայդ թաթման ունիմ՝
Կրծքիս կապած կաշւէ գոգնոց,
Մուրճը ձեռքիս հաւատարիմ՝
Եւ ընկերս՝ կարմիր հնոց։

Բով եմ դրել ջեռ քուրայում
Սև մետաղէ մի մեծ զանգւած,
Բայց յամառը ոչ արթնանում,
Ոչ յուզում է կեանքի մի կայծ...

Բայց ահա, տես, հուրհը բատող
Արկի պէս նա արթնացաւ,
Եւ խաւարի մէջ խարխափող
Արհեստանոցը լուսացաւ։

Եւ կայծերի տարափի տակ
Բերին նրան դրին սալին.
Դէս, մուրճհարներ, եկէք ձև տանք
Ուշքի եկած այս յամառին...

Յակոբ Յակոբեան



4845 - 2010

ԿԻՍԱՏ ՏՈՒՆԸ

Այդ էն ժամանակն էր, երբ ամեն ինչ շարժւեց, երբ մութ խորշերից լոյս աշխարհ եկաւ լուռ տանջանքը, երբ բացւեցին փակ բերանները...

Այն ժամանակ գիւղացի Սարգիսը վերադարձաւ քաղաքից և յայտարարեց գիւղի շուկայում:

— Ել հարուստներ չկան. սրանից ետք հարուստ ները մենք ենք...

Ու ոգեորւած՝ նա պատմում էր, շամեցնում լսող մի խորամանկ ժպիտ, որից փայլում էին նրա մանր, ներին իր բերած նոր մտքերով...

Ապա եկան քաղաքից և ուրիշները նոյն հովերով, ամբողջ օրը բազարը դըղրդում էր նոր խօսքերից... և ամբողջ օրը բազարը դըղրդում էր նոր խօսքերից... Այդ օրերին էր, երբ Սարգիսը ուրախ, զւարթերկուսի վրայ. նա աշխատում էր լուռ մնալ, արհամարեգ ու խաղով սկսեց իր տան շենքը: Նա բարձրաւ բայց երբ Սանդրօն չափն անցնում էր, ել չէր ցրեց պատերը, բայց չկարողացաւ ծածկել ու սարքերը տունը:

Անցան տարիներ...

Սարգիսը դարձեալ գիւղումն էր.—քաղաքում այլ գործ չկար...: նա ման էր գալիս գլխիկոր, ինքն ինք, բուռ աշքն էլ կը հանեմ... իրեն: Խունացել էր նրա չուխան, որի վրայ երկում էի իրկու մեծ կարկատաններ, դգունել էր նրա դէմքին իր շուրջը պատել, կարծես նոյնպէս խունացել էր, իս նրա տունը դարձեալ կիսատ էր...

Անցել էր էն ժամանակը...

Կեանքը նորից իր նախկին կունի մէջ էր մտել: Շոկայում դարձեալ իրենց առաջւայ դիրքելն էին զրաւ երկու վաշխառուները—հաստափոր Սանդրօն և լր Մարտիրոսը:

Եւ ամեն անգամ, երբ Սարգիսը մռայլ անցնում էր բազարով՝ հաստափոր Սանդրօն, շրջապատւած իր մարդկանցով, բզաւում էր նրա ետեւից լիառատ, հրճւալից ճայնով ու հեգնող շեշտով.

— Սարգիս, բա ասում էիր՝ էլ հարուստներ չկան. բա ինչի տունդ չես շինում. կիսատ ա մնացել...

իսկ Մարտիրոսը սպասում էր, որ նա մօտենայ իրեն, ու կամացուկ ասում էր.

— Սարգիս, կարելի ա փող ա հարկաւոր, արի տամ, տունդ վերջացրու...

Եւ նրա չորացած, խոշոր դէմքի վրայ խաղում էր մի խորամանկ ժպիտ, որից փայլում էին նրա մանր, խոր ընկած աշբերը:

Սարգիսը դաղւում էր այդ խօսքերից, որոնք յիշեցնում էին այն օրերը, երբ նա յարձակւում էր այդ ամբողջ օրը բազարը դըղրդում էր նոր խօսքերից... Երկուսի վրայ. նա աշխատում էր լուռ մնալ, արհամարեգ ու խաղով սկսեց իր տան շենքը: Ել բայց երբ Սանդրօն չափն անցնում էր, ել չէր ամբքերում.

— Շատ մի եղակալիլ. հալբաթ էն օրը էլի կը այ. մի առւով որ ջուր ա գնացել, մին էլ կը գնայ... լաղ աշխարհի տունն ա կիսատ մնացել, մենակ իմը հօգործ չկար...: նա ման էր գալիս գլխիկոր, ինքն ինք, բուռ աշքն էլ կը հանեմ... լաւ իմանաս, էն օրը էլի կերեայ, տունս կթամամէջ խորառուզւած, աշխատելով աննկատելի դարձն իրեն: Խունացել էր նրա չուխան, որի վրայ երկում էի լայնացնելով իր լայն տեղը, և նրա հետ հոհում երկու մեծ կարկատաններ, դգունել էր նրա դէմքին իր շուրջը պատած մարդիկ...

— Ծիծաղիր, ծիծաղիր, տեղդ լենացել ա... ամառ միտդ պահիր, քանի խալիսի ցաւը կայ՝ էն օրերը զտի նման դռանդ էլի կչոքեն... ասում էր Սարգիսը, ոռը հեգնանքով չափում ոտից զլուխ Սանդրօին, ապա ուանում դանդաղ, հանգիստ քայլերով...

Արագի

ԱՐՈՐԵԱՅ ՀԻՄՆԸ

Նւէր Յակոբ Յակոբեանին

Փառք յաւերժ շողուն, անմահ արևին,—
լուսաշաղ դէմքին ծաղկունքը ցանած,—
Որն ուր ծագում՝ կեանքն է զարթնում,
խաւարը փախչում հիմնով սասանած.
Եւ ծով-երկնքին, անհաս երկնքին,
որի վէս կրծքին ամպերն են ճայթում,
Ամեն մի փայլուն աստղիկը սիրուն
յաղթ-ապագային նոր կեանք է մաղթում

Փառք արև—սիրուն, անձնուրաց սիրուն,
որ տատասկում էլ ուրախ կ'ժպտայ,
Լոյս—Ճշմարտութեան՝ դռները բաղխող,
որ իր անսասան, մեծ ուղին կ'երթայ.
Եւ այն ամենին մարդկանց աշխարհում,
ուր սրտեր կ'ապրեն՝ հուրերը վառած,
Խիզախ ու անպարտ մաքառող ոգուն,
բով-խարոյկի մէջ հզօր կամք առած:

Փառք կարող մտքին՝ ստեղծագործող,
որ գիշեր-ցերեկ դադար չ'գիտէ,
ինչ որ գեղեցիկ, հմայքն է անուշ,
ինչ ջերմ-աղօթքով մարդը կ'պաշտէ.
Եւ այն սրբութեան՝ ոգին հաճելի,—
անունը չքնաղ՝ ժպիտ, ինդութիւն,—

Որ մահն է հեգնում, մեղկ-տեսքը նորա
ու արհամարհում սկը-դժբախտութիւն.

Փառք ծաղկունքի մէջ ծնւած երազին,
եռանդը կրակ աշխատող բազկին,
Սև կապանքն ազատ լեզվին հոյակապ,
հրեղէն շանթով կայծակնդ խօսքին.
Եւ որոտ-երգին՝ հսկայ թափ առած,—
պայքարող կրծքի կոչն ու մտորում,—
Որ ամեն անգամ յիշեցնել գիտէ...
հեռու, լուսեղէն մի աշխարհ սիրուն:

Փառք ողջ աշխարհին, ինչ որ ապրում է,
շարժւում անդադար, յառաջ ընթանում
ինչ կեանքն է լեցնում, տոկում ու աճում
ու կենդանութիւն իր շուրջը բերում.
Եւ մարդուն, որպէս ծաղիկն աշխարհի—
յաղթագին հոգին շքեղ բնութեան,—
Աշխարհի աստծուն, աշխարհի մանկան—
մարդուն ամենուր—փառք ՚ի յաւիտեան

Կամարի

ՉՈՐՐՈՐԴ ՎԿԱՅԱԿԱՆԸ

Փականագործ իվանը իր շնորհի վրայ վստահ, յանձնարարական նամակը ծոցը դրած՝ առաւօտեան ժամի 10-ին գործ խնդրելու համար ներկայացաւ կառավարչին:

Հանքերի կառավարիչը, որ թանձր ու թուխ մօրուքով մի պարոն էր, նամակը իվանի ձեռքից առնելով, իրենց սովորութեան համեմատ՝ ուզեց մի կողմ գնել և ասել՝ գործ չկայ. բայց ծանօթի գիրը ճանաչեց, մի քանի տողից բաղկացած նամակը աչքի անցնելուց յետոյ սեղանի վրայ դրեց ու հարցրեց.

—Ամուսնացած էք. ձեր ընտանիքը մեծ է...

Պ-ի հարցը իվանին տարօրինակ երևաց. նա հարցին ուղիղ չպատասխանեց, այլ իր շուրջը նայելուց յետոյ ասաց, որ շնորհալի վարպետ է և այդ մասին վկայականներ ունի, դեռևս աշխատելու ոյժը չի պակասել, դա էլ բժիշկները կվկայեն:

—Կամաց, մոմուց Ստեփան Եգորիչը (այսպէս էր կառավարչի անունը) իվանի «բթամտութեան» վրայ ու գլուխը թափահարելով նկատեց.

—Դուք ինձ կենսագրութիւն էք պատմում, ես կարօտ չեմ դրան. դրւած հարցիս պատասխանեցէք...

—Բայց ձեր հարցը իմ գործ խնդրելու հետ ինչ կատ ունի:

—Ինչպէս չէ, ունի, այն էլ մեծ կապ:

—Չեմ հասկանում. վկայականներ, ձեր բարեկամի նամակը, միթէ սրանք հերիք չեն. գուցէ իմ ոռու լինելն է խանգարում:

Ստեփան Եգորիչը թեթև կերպով ժպտաց և ուռած փորը ձեռքով շփելով պատասխանեց.

—Տեսնում էք, դուք նորից ինձ չհասկացաք. յիմա էլ ձեր ոռու լինելը առաջ քաշեցիք: Ազգի բանւոր,

ազգի կապիտալ և նման խելառ բաներ միայն գաղէթ-ներում կարելի է գրել: Իմ ասածը բոլորովին այլ հասկացողութիւնից է բղխում:

Երբ բանւորը լսեց և ծոծրակը քորելուց յետոյ աչքերը լայն բաց անելով՝ պատրաստեց լսելու Ստեփան Եգորիչը շարունակեց.

—Գործը իրեն կարդին, իսկ գաղէթները՝ իրենց: Որքան էլ նըանք զորգուան, զըեն, թէ հարուստները իրենց ազգի բանւորներին պիտի գործ տան, զործատիրոջը այդ չէ հետաքրքրում, այլ՝ շահը... Արդիւնաբերութիւնը բարեգործական ընկերութիւն չէ, կարծեմ առ դուր էլ զիտէք...

Իվանը գլխով հաւանութեան նշան արաւ:

Ստեփան Եգորիչը, որ ուրիշ տնգամները երկու բառով կասէր «գործ չկայ» և դրանով էլ հարցը կփակէր, այս անգամ կարծես թէ ուզում էր հասկացնել, որ ինքը լոկ թուղթ ստորագրողներից չէ և շարունակեց.

—Եթէ օգուտը ձեռք է բերւում շահագործումից, ապա այդ օգուտի չափը մեծանում է աշխատելու միջոցների հեշտացնելուց, վարձագնի պակասութիւնից և մի շարք այլ ծախքերի կրճատումից:.. Երբ ծառարողը ամուսնացած, ընտանիքի տէր է, նա հանքի տիրոջ վրայ կրկնակի, եռակի ծախս է նստում...

* *

Երբ կառավարիչը իր խօսքը վերջացրեց, Իվանը մինչև ականջների ծայրը կարմրել էր: Նա չգիտէր ինժեների «գործնական» հարցին ինչպէս պատասխանել: Փականագործը յիմարութիւն էր ունեցել ամուսնանալու, իսկ բնութիւնն էլ անխղճաբար նրան երեք զաւակ էր տւել:

Նա գէպի աշխատանքը վերացական սէր չէր տածում: Եթէ այդ ըսպէին զլուխը բաց Ստեփան Եգորիչի առաջ կանգնած գործ էր խնդրում, երեխաներին

կերակելու, իրա ապրելու հարցն էր նրան ստիպում այդպէս անելու, և ոչ թէ կիրակոս կամ Մարկոս աղայի հարստանալու ինդիրը:

Մինչդեռ նա փորձով գիտէր, թէ աշխատանքի համար հարկաւոր են ուժեղ մկանունքներ, աշխատելու ընդունակութիւն, ձեռք, ջնորհք: Նա յիշեալ բոլոր յատկութիւններից զուրկ չէր, ապահովւած էր...

Սակայն Ստեփան Եղորիչի նոր պայմանը ո՞րտեղ լոյս ընկաւ:

Մնացել էր շւարած:

Մի քանի բոպէ լուռ մնալուց յետոյ, երբ կառավարիչը իր քննական հայեացքը դէպի դիմացի բանւորին ուղղեց, վերջինը պիջակի գրապանից զանազան ժամանակներից ստացած մի կապոց վկայականներ հանելով՝ նրան երկնցուց, ապա ասաց.

—Ճիշտ է, ամուսնացած եմ, երեխաներ էլ ունեմ, բայց և այնպէս այս երեք թղթերը ձեզ կհամոզեն, որ գործի համար պէտքական մարդ եմ... Գոնէ սրանց գնահատեցէք. 15 ճիշտ տարիների աշխատանքէ պտուղ են սրանք:

* *

Բանուրի խօսակիցը իր ասելիքը վերջացնելուց յետոյ պատրաստւում էր հանքերը շրջելու գնալ: Նա իվանի տատանելիր տեսնելով, արդէն հասկացել էր, որ ամուսնացած է: Այլևս չուզեց նորից բացատրութիւնների մէջ մտնելու:

Երբ փականագործը վկայականների կապոցը ցոյց տւեց, նա քմծիծաղ տալով, նկատեց.

—Էս օրից յետոյ էլ թող իմ խօսքերը ձեզ համար չորրորդ վկայական լինեն: Ցաւում եմ...ձեր արտաքինը ինձ դուր է գալիս: Թէկուզ իմ բարեկամի խաթեր համար կարելի էր գործ տալ, բայց ինչ անենք, երբ մեզ

համար սկզբունք ենք դարձրել գերադասութիւն տալ չամուսնացածներին... մնաք բարեւ:

Եւ գլխարկը գերցնելով՝ իրան նետեց բակում կանգնած կառքի մէջ ու հեռացաւ: «Երկար տարիների աշխատանքի պատուղը» ձեռքին, իվանը մնաց կանգնած: Յետոյ ծալեց, գրպանը դոեց ու գլուխը տիրութեամբ շարժելով՝ մումոաց. «Չորրորդ վկայական... բայց դա ձեր նման Մալթուսների հեգնանքը չպիտի լինի, այլ... և սկսեց մտածել այն իրական ոյժի մասին, որը իրաւոր բանւորների համար չորրորդ վկայականը պիտի լինի»

Ու գլուխը բաշ արած բայլերը ուղղեց դէպի արհեստակցական միութեան գրասենեակը

Մելիք

ՄԵԾ ԻԴԵԱԼԻՆ

Եկել եմ, ահա, կարօտով արբած՝
Ծեծում եմ դուռդ իմ կեանք, իմ Արև.
Տանջանք-յոյզերի կըքերից սրբւած՝
Եկել եմ բեզ տամ տենչալի բարեւ...

Անցայ դաշտերը անծիր հմայքով,
Նայեցի շուրջս՝ ծաղիկներ գմրուխտ,
Եւ բարձրանում էր արփին նազանքով,
Տեսայ՝ շւում են ամպերը պանդուխտ...

Փշեցի կամուրջը սիրոյ անձնական,
Հե ի հե հասայ դէպ քեզ առյաւէտ.
Ուզում եմ ապրել քեզ հետ մշտական,
Ինձ համար էլ դարձ չկայ այսուհետ:

Սուսան

ՈՒՓ... ՈՒՓ...

Կէս գիշեր էր: Աշնանային սառնաշունչ քամին վրդովելով ծովի խաղաղ հանգիստը, գոռալով ու սուլերով գալիս խառնում էր Բագրի նաւթահանքերում գործող շոգիների հետ, որոնք նախ քան խոզովակների միջից դուրս գալը, իրենց փակւած ոյժերով պատեցնում էին գործարանների հսկայ մեքենաները և ապա, կարծես յոզնած, շունչերը կտրած, դուրս էին ժայթքում խոզովակների միջից, խորը հառաչելով՝ ուժ... ուժ... և անհետանում գիշերային խաւարի մէջ:

Կի գործարանից նոր գուրս գալով՝ քայլում էի միայնակ, անձնատուր եղած այդ գիշեր տեղի ունեցած վիճաբանութիւններին, երբ յանկարծ մթութեան մէջ լսեցի մի օրհասական ճիշ, աւելի սրտակտուր քան քամու ողբք:

Անգիտակցաբար կանգ առայ. ձայնը լսում էր նորից ու նորից և քանի գնում՝ այնքան աղիողորմ էր դառնում:

Ես սթափեցի. ձայնը գալիս էր խճուղուց մի քանի քայլ հեռու գտնուող գործարանի հանրակացարաններից: Աւելի ևս առաջ գնալով, ես մօտեցայ հանրակացարաններին: Նրանցից մէկի լուսամուտը բաց էր. նիրս նայեցի, սակայն թանձր օդի և աղօտ լուսաւորութեան մէջ դժւար էր որևէ բան որոշել: Մի երկու ըոպէից յետոյ տեսողութիւնս ընտելացաւ, և... օ սարսափ, ինչ բացւեց առջևս... մի սրտաշարժ տեսարան... զարհուրելի մի պատկեր...

Կեղտոտ, մութ սրահում, իրար համարեա կից, դրւած էին մօտ քառասուն-յիսուն մահճակալներ, ծածկւած կեղտոտ, մաշւած փալասներով:

Նրանցից մի քանիսի վրայ շարժում էին մարդկային սև ուրականներ, որոնք իրենց տեսքով չէին տարբերում շուրջը թափւած ցնցուիներից:

Մթնոլորդը հեղձուկ էր և խեղդող:

Ելքէտրական միակ լապտերը մրոտ ապակու միջից հագիւ էր լուսաւորում բանւորների այս խղճուկ, բայց խորհրդաւոր կացարանը:

Մահճակալներից մէկի վրայ ընկած էր արիւնաշաղախ, այլանդակւած մի գիտակ. նրան շրջապատել էին մի քանի սև-

բանւորներ, որոնցից ոմանք փաթաթում էին վիրաւորի վէրքերը, ոմանք էլ տիտուր, գլխակոր դիտում ընկերոջ կրած տանջանքները...

Շրջապատող բանւորների մէջ նկատելով ծանօթ գէմքեր, ևս ձայնեցի նրանցից մէկին անհանգիստ շեշտով.

—Աւանէս, ինչ է պատահել...

Ինձ պատասխանող չեղաւ, երեսում էր՝ խիստ էին զբաղւած: Պտիպւած ձայնեցի նորից. այս անգամ արդէն աւելի բարձր ու սարսափահար.

—Այս ինչ է պատահել, պատասխանցէք ի սէր Աստծոյ:

Հստ երեսոյթին ձայնիս շեշտը այնքան ցնցող էր, որ այս անգամ ամենքն էլ յանկարծ դէպի ինձ դարձան և ես մի ակնթարթում կարողացայ նրանց բոլորի գէմքերի վրայ նկատել մի անասելի աղեխարշ արտայատութիւն:

Նրանք ամենքն էլ լուռ, երբեմն ցասկոտ նայում էին ինձ, կարծես այսպիսով ասելիս լինէին:

—Զե՞ս տեսնում, ինչ է պատահել...

Իսկ ես տեսնում էի, միայն բացատրել չէի կարողանում, մինչեւ որ մի ծերունի բանւոր, որի հետ ես վազուց ծանօթ էի, կարծես հասկանալով այդ, դարձաւ ինձ.

—Հէյ, հա... աշխարք, աշխարք. էլ ուրիշ ինչ կարող է պատահել մեր կեանքում բացի մահից, քաղծից, տանջանքից... Շատ չէր անցել ինչ մեր աչքերում չորացել էր արտասուրքի ծովը և ահա այսօր, էլի մէկ զոհ տվինք... միայն թէ սա շատ ցաւալի զոհ է և եթէ չգիտես ով է՝ կպատմեմ: Ես ներս մտայ բաց զոնով և մօտեցայ վիրաւորին, որին իսկոյն ճանաչեցի...

Դա երեսնամեհայ, բարձրահասակ, թուխ մազերով ու գրաւիչ գէմքով մի բանւոր էր—մեր ընկերներից մէկը:

Շատ յաճախ աեսնում էի նրան բանւորական ժողովներում. նա միշտ աչքի էր ընկնում իր կրակոտ ճառերով, ձեռքերի թափու շարժումներով, և շիտակ, աղնիւ, առանց կրքերի, համողիչ խօսքով: Նայեցի գէմքին և մի լուռ կսկիծ զգացի սրտում...

—Այս, նկատեց ծերունին,—դու երեխ ճանաչեցիր և այդ բանը քեզ ցաւ պատճառեց... Բայց այդ գեռ բոլորը չէ. երբ կլսես նրա պատմութիւնը, այն ժամանակ կրկնապատիկ կըցաւես... Այս ասելով մըտած քսակից հանեց ծխամորճն ու ծխախոտը, բթամատով սեղմեց այն, վառեց և, մինչ ընկերները գլխակոր կանգնած էին վիրաւորի մօտ՝ ինքն էլ գպալով

իր անզօրութիւնը նրա տառապանքի առաջ, խոր հոգոց քաշեցով սկսեց ծխել և պատմել.

—Երկար, շատ երկար տարիներ է անցել, խօսեց նա, ինչ ես այստեղ աշխատում եմ, և այդ ժամանակամիջոցում լաւ եմ ճանաչել, թէ ի՞նչ է գործարանային կեանքը ու նրա մէջ աշխատելը... բայց աւելի լաւ է գործարանի մասին չխօսեմ, որովհետև դա մի շատ երկար ու դժւար պատմութիւն է և բացի այդ՝ նրա մէջ մարդկային անուզար շատ կայ... այ, ինչ պէտք սա, տեսնում ես... հա, ես կխօսեմ միայն սրա մասին, ասաւ ձերուկը, ցոյց տալով վիրաւորին:

Ես դեռ ջանէլ, բսանհինդ տարեկան առողջ և ուժեղ երիտասարդ էի, երբ հազարբերան կարիքը ճնշելով, դուրս հրեց ինձ հայրենի գիւղից. և ես վերջին կտոր հողս էլ ծախելով, սրա հետ միասին եկայ այս անիծհալ քաղաքը աշխատանքի: Ես ամուսնացած չէի, բայց ունէի ծերացած հայր, մայր և երեք քոյրեր, որոնք միշտ էլ կիսաքաղց օրեր էին քաշում. ընկերս ամուսնացած էր և այս տղան այն ժամանակ դեռ հագիւ հինգ տարեկան լինէր:

Գիւղից գուրս գալուն պէս մենք եկանք այս մեծ քաղաքը, մտանք գործարան, սկսեցինք բանել: Մեր աշխատանքը շատ ծանը էր, իսկ սուացած ոռնիկներո՞ չնչին. և որպէսզի մի քանի մանէթ տուն ուղարկէինք, ստիպւած էինք օրը տասն ութ ժամ աշխատել և նոյնպէս կիսաքաղց մնալ... հէյ գիղի օրեր. և նա մի խոր հառաջանք թողեց ծխամորճից ենող ծուխի հետ:

Շատ անգամ սրա ողորմածիկ հայրը ասում էր.

—Ախ, Թիւնի, եանի կլինի՞, որ մէկ էլ ընտանիքիս երեսը տեսնեմ, գրկեմ սիրուն Վանէսիս, ու յետոյ գամ գործիս...

Ա՛ Թիւն, օր է, աշխարք է, եթէ ես մեռայ, դու գոնէ աշխատիր Վանէսիս բերել այստեղ, ուսումի տալ, գոնէ նա թեթևանայ մեր ճակատին գրած չարչարանքից, թէ չէ նա էլ ստիպւած պիտի թողնի իգիւղը և գայ գործարան աշխատելու, հալ ու մաշ լինելու մեզպէս:

Ախ գործարան... գործարան... ասում էր նա և անզօր հառաջում... հառաջում...

Մի անգամ էլ եկաւ գործից, և ամբողջ վիշերը չքննեց... իսկ առաւոտը ժամի 6-ին անքուն, ջարդւած, ուժասպառ զնաց նորից աշխատելու, բայց կէս օրը դեռ չմօտեցած, մի անզոյշ քայլից ընկել էր անողոք շոգեմեքենայի անիւի տակ և մեռել...

Ինչպէս անձայն, աննկատելի եկել էր, այնպէս էլ գնաց մարդը. ոչ ոք չխօսեց նրա՝ մահան մասին, ոչ ոք չհետաքրքրւեց, կարծես այդպէս էլ պիտի լինէր, որպէս սովորական մի երեսից: Միայն ես էի, որերկար մորմոքւեցի, բայց դրանից ի՞նչ օգուտ... խեղճի ընտանիքը մնաց քաղցած, և թշւառ կինը ամուսնու մահից յետոյ որդուն էլ քաղցից չսպանելու համար՝ ուղարկել էր ինձ մօտ աշխատելու:

Սյոյ օրից անցել է միշտ քսան և հինգ տարի:

Գործարանում և ոչ մի փոփոխութիւն. էլի նոյն ջուրը, նոյն քարխանէն... մինչդեռ այն օրւայ երեխան այսօր մեծացել ահագին մարդ է դարձել: Մի անգամ էլ գնաց նա գիւղ և զիջելով մօր թախաձանքներին այնտեղ ամուսնացաւ: Բայց բանորը մի անգամ հայրենի գիւղից գուրս գալուց ու գործարանում բանորը գրելուց յետոյ կարող է միթէ նորից վերադառնալ գիւղ ապրելու համար... դա, ի հարկէ, երազ է. այդպէս եղաւ և սրանը ու իր հօր պէս ընդմիշտ մնաց գործարանում... իսկ վերջը... վերջը գու տեսնում ես. ահա այս է...

Այսօր սա սարքում էր նոր հորի վիշկան, բայց այդ ըոպէին առաջին անգամ յանկարծակի սկսեց խփել ֆանտանը և այն էլ այնքան ուժգին, որ այս թշւառին հենց մի հարւածով անագին բարձրութիւնից գլորեց ներքև, ջարդեց ոտքն ու ողնաշարը... Եւ ահա նա:

Այո, և այսպէս անվերջ մենք կարծես պարտաւոր ենք մեզ մի կտոր սկ հացի համար խաղէիններին միլիոնատէր դարձնել սերունդից սերունդ տալ մեր կեանքը, ջահել հասակը, սիրար, հոգին, զգացմունքները... Այո, պարտաւոր ենք...

Նա հեգնանքով հենց նոր վերջացնում էր խօսքը, երբ դուռը բացւելով ներս մտան մի խումբ բանորներ՝ նոյնպէս կեղտոտ, նոյնքան գունատ ու զժգոյն:

Նրանք շարած ու համրածայն շրջապատեցին հիւանդին, որը համարեա բոլորովին ուժասպառ՝ մի վերջին անգամ ևս շուրջը նայեց ու տեսնելով հաւաքւած ընկերներին՝ խօսեց նըւազած ձայնով.

—Ընկերներ, ես մեռնում եմ... մեռնում՝ ինձ հետ տանելով իմ ամենալաւ նպատակները. երեսուն տարւայ կեանքիս բոլոր յոյսերի փոխարէն մեռնում եմ այսօր քաղցած, անտուն ու անտէր... բայց ի՞նչու... ի՞նչու...

—Ասացէք՝ ուր է մայրս, կինս ու բալէս. միթէ այս էր իմ վարձատրութիւնը, իմ ճակատագիրը... բայց ախ, որքան սկ գրեց այն և ի՞նչմիւ... ի՞նչու...

Վիրաւորի վերջին խօսքերը այնպէս ազդեցին շրջապատող բանալորների վրայ, որ նրանք ամենքն էլ սարսափահար նայեցին միմեանց ու ակամայ կրկնեցին՝ «ինչու... ինչու...»

Նրանց գէմքը այդ րոպէին պակաս զարհուրելի չէր. բողոքն ու վիշտը միախառնւած՝ պատել էր նրանց գունատ գէմքերը. կարծես ամեն մէկը իր կճառագրութիւնը, իր վախճանն էր տեսնում այս մէկի մէջ:

—ի՞նչ անես, յուսահատ հեզնեց մէկը. ասում են ճակատագիր է. այս, ճակատագիր, որ գրում է միայն աշխատաւորի ճակատին:

Թշւառ վիրաւորը այլ եօ չէր կարողանում խօսել այլ խուլ անքալով հապիւ շարժում էր շուրթերը, կարծես ինչոր աւանդ, ինչոր պատգամ էր ուզում թողնել շրջապատող ընկերներին..

Մի վերջին անգամ ևս նա աչքերը բանալով, նայեց շուրջը ու նւազած հառաչեց՝ ուփ.. ուփ.. ուփ...

Ես սարսափեցի... որքան նման էր նրա այդ հառաչանքը քիչ առաջ գրում լսած շողու հառաչանքին...

Այս, շողին ու մարդը... որքան նման են իրար այստեղ...

Մարօ



Գոյողժմութ մ ԿՈՉՈՒ Գոյողժմութ

«ԿՎՃՎԱՍՎՃՑՈ

ովրացապատմե «ՃՎԳ» մուսուլում

• ԵՍԿ Տ Հ Յ Ա Վ Ե

• ԽԱԼ Հ (Պատմական պատմական)

ՃՐ պատմական մակե վիվածութ ԿՕՉՈՎԵՑՈՅ Ռ (8)

Դ կոտ վիարութ

• ԽԱԼ Հ (Պատմական պատմական)

Վ վագագնակ մատուցութ ՎԻՇՆԵՑՈՅ Ռ (9)

ԽԱԼ Հ (Պատմական պատմական)

Վ վագագնակ մատուցութ ՎԻՇՆԵՑՈՅ Ռ (10)

ԽԱԼ Հ (Պատմական պատմական)

Վ վագագնակ մատուցութ ՎԻՇՆԵՑՈՅ Ռ (11)

ԽԱԼ Հ (Պատմական պատմական)

Վ վագագնակ մատուցութ ՎԻՇՆԵՑՈՅ Ռ (12)

ԽԱԼ Հ (Պատմական պատմական)

Վ վագագնակ մատուցութ ՎԻՇՆԵՑՈՅ Ռ (13)

ԽԱԼ Հ (Պատմական պատմական)

Վ վագագնակ մատուցութ ՎԻՇՆԵՑՈՅ Ռ (14)

ԽԱԼ Հ (Պատմական պատմական)

Վ վագագնակ մատուցութ ՎԻՇՆԵՑՈՅ Ռ (15)

ԽԱԼ Հ (Պատմական պատմական)

Վ վագագնակ մատուցութ ՎԻՇՆԵՑՈՅ Ռ (16)

ԽԱԼ Հ (Պատմական պատմական)

Վ վագագնակ մատուցութ ՎԻՇՆԵՑՈՅ Ռ (17)

ՀՀ Ազգային գրադարան



NL0254543

Գրադարանի պահպանական համար

7f.660